տօնն էին վարում: Այդ պաշտօնը միայն Ռշտունեաց նախարարների արտօնութիւնն էր:

Ռշտունեաց աշխարհը տոել է մեզ երեւելի հերոսներ, որոնք հայոց հին պատմութեան մէջ փայլուն անուն են թողել: Այստեղից էր Բարզափրան սպարապետը, որ Տիգրան երկրորդի օրերում մի արշաւանք գործեց դէպի Պաղեստին եւ, հռոմէայեցոց հետ պատերազմելով, ջարդեց, հալածեց նրանց, յետոյ տիրեց Երուսաղէմին: Այնտեղ Անտիգոնոսին թագաւոր կարգեց Հիւրկանոս քահանայապետի եւ, միեւնոյն ժամանակ, արքայի փոխարէն: Այդ ձեռնտոութեան համար Բարզափրանը ստացաւ Անտիգոնոսից, իբրեւ ընծայ, հինգ հարիւր գեղեցիկ կին եւ հազար քանքար ոսկի: Իսկ Հիւրկանոս քահանայապետին հրէից բազմաթիւ գերիների հետ բերեց Հայաստան, բնակեցրեց Վան քաղաքում:

Այստեղից էր Մանաճիհր (Մանուչահր) քաջ նահապետը, որ Տրդատի եւ նրա որդի Խոսրովի ժամանակ հարաւային զօրքերի սպարապետ էր: Այդ նահապետի օրերում աւելի սաստկացել էր այն խուլ կռիւը, որ սկսուեցաւ Լուսաւորիչի ժամանակից եւ տեւեց մինչեւ նրա վերջեն ժառանգի՝ Սահակ Պարթեւի օրերը: Դա նոր հաստատող քահանայապետական եւ նախարարական իշխանութեան կռիւն էր: Դա հոգեւոր իշխանութեան կռիւն էր, մի կողմից եւ մարմնաւոր իշխանութեան կռիւն էր, միւս կողմից: Հոգեւոր իշխանութիւնը, հոգեւոր ազահութեամբ, աշխատում էր իրաւունքներ, արտօնութիւններ, կալուածքներ ձեռք բերել, եւ սահմանափակել թէ՛ թագաւորի, թէ՛ նրա նախարարների իշխանութիւնը: Այստեղից ծագեց կռիւը: Նրա սկիզբը դրեց Լուսաւորիչը: Եւ այդ կռոի մէջ զոհ գնացին՝ թէ՛ ինքը Լուսաւորիչը եւ թէ՛ նրա բոլոր ժառանգները՝ Արիստակէսը, Վրթանէսը, Յուսիկը, Ներսէս Մեծը եւ Սահակը: Իմ խօսքը Մանաճիհր Ռշտունու մասին էր: Դա մի արշաւանք է գործում դէպի Ասորեստան եւ սուրբ Յակոբ Մծբնայ հայրապետի վիճակից բազմաթիւ գերիներ է բերում, նրա ութն սարկաւագների հետ Ծերունի հայրապետը անձամբ գալիս է Մանաճիհրի մօտ, խնդրելու, որ արձակէ գերիներին: Բայց խստասիրտ Մանաճիհրը, փոխանակ նրա աղաչանքը լսելու, նրան աւելի վշտացնելու համար հրամայում է գերիներից ութն հարիւր հոգի՝ հայրապետի ութն սարկաւագների հետ՝ նետել ծովը: Ասլանը ինձ ցոյց տուեց այն տեղը, ուր կատարուել էր այդ եղեռնագործութիւնը: Դա Ոստանից ոչ այնքան հեռու մի ապառաժ հրուանդան էր, որի բարձրութեան վրայ գտնուում էր Մանաճիհրի Մանակերտ անունով բերդը: Այդ բարձրութիւնից թափեցին ծովը խեղճ գերիներին: